
**ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. Գ.

Արդի մամուլում շարահյուսական կապակցությունները ոչ միշտ են ճիշտ կիրառվում: Այդ են վկայում մամուլում տեղ գտած շարահյուսական կապակցությունների սխալ դրսևորումները:

Շարահյուսական կապակցություններ են բառերի կապակցությունը, որ կարող է լինել առդրական՝ (գեղեցիկ աղջիկ), խնդրառական՝ (սիրելի աղջկան), համաձայնական (աղջիկը սովորում է, աղջիկները սովորում են), ինչպես նաև նախադասությունների կապակցությունը, որը լինում է շաղկապներով և շարահարությամբ:

Շարահյուսական կապակցությունների այս ընդհանուր եղանակներից ու միջոցներից կքննենք հատկապես դրանց տարածված սխալ կապակցման ձևերը:

Նախադասությունների կապակցություն: Մա իր բաղադրիչների սոսկական գումար չէ ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային առումներով, այլ շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական, հնչերանգային ներքին օրինաչափություններով¹: Արդի մամուլում նախադասությունների, ինչպես նաև նրանց բաղադրիչ նախադասությունների կապակցությունը միշտ չէ, որ ճիշտ է իր բառական, քերականական, հնչերանգային ներքին օրինաչափություններով:

Ժամանակակից լեզվաբանությունը նախադասությունների կապակցությունը դիտարկում է թե՛ բարդ նախադասությունների ներսում՝ որպես բաղադրիչների կապակցություն, թե՛ անկախ, ինքնուրույն նախադասությունների միջև՝ որպես խոսքի հատվածների կապակցում: Ընդ որում, երկրորդ դեպքում կիրառվում են ինչպես բարդ նախադասության բաղադրիչներին հատուկ լեզվական միջոցներ, այնպես էլ բառային, շարահարական և լայն առումով հնչերանգային այլ կարգի միջոցներ: Բացի բառական միջոցներից՝ նախադասությունների կապակցումը կատարվում է նրանց արտահայտած մտքի ներքին կապով, շարադասությամբ, լայն առումով՝ հնչերանգով:

Բարդ նախադասության կառուցվածքում համադաս և ստորադաս հարաբերություններն արտահայտվում են բառական միջոցներով (շաղկապներ, հարաբերական բառեր) և շարահարությամբ: Բոլոր շաղկապները մասնակցում են նախադասությունների կապակցմանը (համադասական հարաբերությունն արտահայտվում է համադասական, իսկ ստորադասականը՝ ստորադասական շաղկապներով, ինչպես նաև հարաբերական բառերով):

¹ Արթուրյան Ս., Հայոց լեզու. շարահյուսություն, Բուհական ձեռնարկ, Ե., 2004, էջ 221:

Արդի մամուլում բարդ նախադասությունների բաղադրիչների շարահյուսական կապակցման տարածված սխալներից են՝

ա. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված շաղկապների և շաղկապական բառերի սխալ գործածությամբ: *Բարդ համադասական նախադասության (և ոչ միայն համադասական) բաղադրիչ նախադասությունների իմաստային կապը առավել սերտ է լինում գուգադրական շաղկապների դեպքում: Մինչդեռ արդի մամուլում ոչ միշտ է այս գուգորդումը ճիշտ կատարվում: Այսպես՝ միավորական հարաբերությամբ կապված բարդ համադասական նախադասության բաղադրիչները, որտեղ չկան հակադրվող եզրեր (մեկի ժխտում և մյուսի հաստատում), հաճախ գործածվում են ոչ միայն այլ գուգորդումները ոչ միայն այլև-ի փոխարեն: «Ես Ձեզ համարում եմ ոչ միայն հայ ժողովրդին մոտ կանգնած անձնավորություն, այլ՝ ժողովրդավար և ճիշտ մարդ ու ցանկանում, որ Դուք շարունակեք հեռուստատեսությամբ հաղորդաշար վարել» (Իր., 3.5.2007): «Ընթերցողը հնարավորություն կունենա ոչ միայն տեղեկանալ Հայաստանի աշխատանքային շուկայի մասին, այլ սեփական հայտարարությունները տեղադրել աշխատանքի առաջարկի կամ պահանջարկի վերաբերյալ (Աշխ., 1.3.2009):*

Հայտնի է, որ որոշիչ ստորադաս նախադասությունը գերադասի հետ հիմնականում կապվում է հարաբերական բառերով որ(ը), ինչպիսի, որպիսի, ինչ, որքան և այլն, որ, թե շաղկապներով, որոնք, գերադաս նախադասության մեջ ունենալով համապատասխան հարաբերյալներ (ձևական որոշիչներ), կազմում են գուգորդումներ՝ այն.... որ(ը), այնպիսի.... ինչպիսի, այնքան.... որքան և այլն: Մինչդեռ արդի մամուլում որոշիչ ստորադաս նախադասությունը գերադասի հետ գրեթե առանց բացառության կապվում է ով հարաբերական բառով, եթե որոշվող գոյականն անձ է կամ հատուկ անուն (իհարկե, առանց հարաբերյալի): «Երգչին, ով գնում է «Եվրատեսիլ, պետք է անպայման պրոֆեսիոնալներն ընտրեն» (Առ., 27.4.2007): «Հայտնվեց բեյրութահայ երիտասարդ բարերար Պիեռ Գույումջյանը, ով Մատենադարանին նվիրեց իր գնած թվայնացման սարքը» (Իսկ. իր., 29.6.2007): «Բրյուսելում է գտնվում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արմեն Բայբուրդյանը, ով նաև հանդիպումներ է ունեցել ԵՄ կառույցներում» (ՀՀ, 3.2.2007): «Ի դեմս Գագիկ Ծառուկյանի տեսնում էին այն հզոր մարդուն, ով իրենց կպաշտպանի» (Փակ., 19.4.2007):

Հմմտ. «Նա պետք է տեր կանգնի այն վստահության քվեին, որ իրեն տալիս է հասարակության զգալի մասը» (ն.տ.):

«Շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես նշվում էր, որ Վ. Հակոբյանը մանկավարժ է, ով շարունակում է սերունդներին փոխանցել իր գրքերն ու փորձը...» (ՀՀ, 29.10.2008): «Զարմանալիորեն նա դարձավ առաջինը, ով ներկուսակցական հարցերը «լուծեց» դատ ու դատաստանի միջոցով» (Իր., 27.2.2007):

Հանդիպում ենք նաև շաղկապի և շաղկապական բառի սխալ գործածությունների: Այսպես՝ «Նա երբեք չէր լուծում հարցն իր անձնական շահի

տեսանկյունից և քանի որ ներկայացնում է կուսակցություն» (Իր., 3.5.2007): «Այդ օրը օպերայում տեղի է ունենալու «Հատուկ նշանակության երգի» անունը կրող համերգը, իսկ դրսի վրանք, խոհանոցն ու ավտոբուսները բերվել են միայն մի նպատակով, որպեսզի համերգի մասնակիցները մինչև դահլիճ մտնելը տեսնեն և ընդամենը» (Հայկ. ժամ., 5.4.2007): «Ժամերով շուռումուռ եմ գալիս անկողնու մեջ և մինչև լուսաբաց» (Առ., 29.3.2009):

Ինչպես գիտենք, ու միավորիչ շաղկապը գործածվում է ավելի փոքր, իսկ և-ը՝ ավելի մեծ լեզվական միավորներ կապելու համար: Միշտ չէ, որ արդի մամուլում դրանք ճիշտ են կիրառվում: Բերենք թեկուզ մի օրինակ, որտեղ բարդ նախադասության մեջ և՛ նախադասության անդամները, և՛ բաղադրիչ նախադասությունները կապված են ու միավորիչ շաղկապով. «Հանդիսատեսը մի փոքր վրդովված էր, որ ներկայացումների բուկլետներն ու բնութագրերը անգլերեն են, ու իրենք չեն կարող հասկանալ օտար լեզվով խաղացվող ներկայացումները» (Առ., 13.8.2008):

Սխալ են (կամ տեղին չեն) նաև շաղկապների գործածության հետևյալ դեպքերը. «Ինչքան էլ Պոռլսենը գրկվել է էստոնացիների հետ պաշտոնական հանդիպումներից առաջ մեր հավաքականի լավագույն կազմը փորձարկելու հնարավորություններից, բայց, ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի» (Ֆուտ., 11.2.2009): Ճիշտ է՝ Թեև Պոռլսենը գրկվել է...

Կամ՝ «Իր նախագահության առաջին 50 օրվա ընթացքում Բարաք Օբամայի վարկանիշն ընկել է ավելի արագ, քանի նույն ժամանակահատվածում Ջորջ Բուշինը» (Առ., 17.3.2009) (գուցե և վրիպում է, սակայն հանդիպել են մի քանի այդպիսի օրինակներ): «Այստեղ են սովորել մեր երկրի երաժշտական աշխարհի բոլոր մեծերը, բացառություն է միայն Արամ Խաչատրյանը, այն էլ, քանի որ նա ծնվել է Թիֆլիսում» (Իր., 12.2.2007): Ճիշտ է՝ ...Խաչատրյանը, քանի որ նա ծնվել է Թիֆլիսում: Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է որ մեկնական շաղկապով և ոչ թե՛ որպեսզի նպատակային շաղկապով: Ինչպես՝ «Կամենում ես, որպեսզի մարդիկ հանդուրժող լինեն մեր երկրում (Իր., 10.3.2008): «Կարծում եմ, որպեսզի ճգնաժամը շրջանցի մեր երկիրը, այնքան էլ հավանական չէ» (Իր., 16.4.2009):

բ. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված քերականական միջոցների սխալ գործածությամբ: Նախադասության կապակցման քերականական միջոցներից է շարահարությունը, որի դեպքում դեր են կատարում բաղադրիչ միավորների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարադասությունը, իմաստը: Ի տարբերություն բառական միջոցների՝ այդ դերն առավել նկատելի է:

Արդի մամուլում առանց շաղկապի բարդ համադասական նախադասության բաղադրիչները, որտեղ կարևոր է դադարից կախված նրանց ինքնուրույնությունը կամ մեկը մյուսի մեկնաբանություն լինելը, ճիշտ չեն տրոհվում (միջակետի փոխարեն՝ ստորակետ): «Կաթսայատունն աշխատում է կեսից էլ պակաս

հզորությամբ, վերանորոգել են հին սարքավորումներով (168 ժ., 18.9.2008): Կամ՝ «ՀՀ հավաքականը կորուստներ ունի, իրենց խաղընկերներին չեն միացել ռումինական «Պոլիտեխնիկա» ակումբի ներկայացուցիչներ Արման և Արտավազ Բարամյանները» (Հայկ. ժամ., 28.5.2008):

գ. Ոչ ճիշտ շարահյուսական կառույցներ՝ պայմանավորված սխալ թարգմանությամբ: Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներից է նաև շարադասությունը: Այն կարևոր է նախադասությունների իմաստային-քերականական փոխհարաբերությունն արտահայտելու համար:

Արդի մամուլում հաճախակի են հանդիպում շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք այլ լեզուներից նույնությամբ են ընդօրինակվում և հայերենում ընդունելի չեն: Այսպես՝ մամուլից քաղված հետևյալ օրինակում չկա որոշակի շարադասություն՝ պատճառահետևանքային, նպատակային հարաբերություններն արտահայտելու համար, ինչպես նաև անկապակցություն է առաջին պարբերությունը: «Շատ հասարակություններում արգելում են կանանց նկատմամբ բռնությունները. մինչդեռ իրողությունն այն է, որ շատ հաճախ այն թաքցվում է կամ էլ անձայն համակերպվում:

Ահա թե ինչու է Կանանց միջազգային օրն այդքան կարևոր: Այն պարզաբանում է մեր պատասխանատվությունը՝ աշխատելու հանուն տնական փոփոխության արժեքների և վերաբերմունքի բնագավառներում» (ՀՀ, 8.3.2007):

Սխալ թարգմանությամբ են պայմանավորված նաև հետևյալ ոչ ճիշտ շարահյուսական կառույցները. Առնոլդ Շվարցենեգերի ստորագրած հռչակագրում (2009 թ. ապրիլի 19-26-ը հայտարարված է հայոց ցեղասպանության հիշատակի օրեր) մասնավորապես ասված է... «Մեր հայ բարեկամների հետ՝ այստեղ և ամբողջ աշխարհում, մենք հիշում և ճանաչում ենք ցեղասպանությունը, ընտանիքները, որ այն կործանել է, և պատմությունը, որ այն փոխել է: Մենք չենք ուզում հիշել նման վիշտը, սակայն պետք է դա անենք, որպեսզի դասեր քաղենք պատմությունից և նորացնենք մեր ջանքերը՝ ապահովելու, որպեսզի այլևս երբեք չկրկնվի նման բան»: «Սակայն այդ ճգնաժամից հետո նրանց միջև սկիզբ առավ մերձեցման մի գործընթաց, որը 21-րդ դարի սկզբին բերեց այդ երկրների միջև գոյություն ունեցող հարաբերությունների աննախադեպ բարձունքների» (Առ., 10.2.2007):

Կամ՝ «Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մատնանշմամբ, գլոբալ ճգնաժամը կարող է ազդել հազարամյակի զարգացման նպատակներին մինչև 2015 թ. հասնելու երկրի կարողության վրա» (ՀՀ, 15.3.2009):

Ընդհանրապես մամուլում բազմաթիվ են այն օրինակները (նաև ոչ թարգմանությամբ), որտեղ շարադասության խախտումը հանգեցրել է նախադասության մտքի աղավաղման:

Այսպես՝ «Ես այդ թեմայով չեմ կարող խոսել, ես պարզապես ասում եմ, որ մենք ունենք շատ հզոր տնտեսությունից հասկացող առաջնորդ, միայն այդքանը կարող եմ ասել» (Հայկ. ժամ., 14.1.2009):

Պատգամավորի խոսքից ստացվել է այնպես, որ մեր տնտեսությունն է հզոր, մինչդեռ նրա ասածը վերաբերում է կուսակցության առաջնորդին և ոչ թե՛ տնտեսությանը:

Ճիշտ է՝ մենք ունենք տնտեսությունից շատ լավ հասկացող առաջնորդ:

«Տարիներ շարունակ երկիր մոլորակից մի տեսակ բացակա մեր հայրենիքը հայտնվել է աշխարհի հզորների շահերի խաչմերուկում, որը վերջին մեկ տարվա դժվար մեր ապրած կյանքի արժանապատվության արդյունքն է, և ուր մեր երկիրը վերջապես կարող է դառնալ Անդրկովկասի կենտրոն» (Առ., 15.5.2009):

Պետք է լինի՝ մեր ապրած դժվար կյանքի....

«Ճգնաժամը իրենց չի վախեցնում, ուստի փորձելու է Հայաստանի կառավարության և մասնավոր հատվածի հետ քննարկել մի շարք իրենց հետաքրքրող նախագծեր» (Առ., 16.2.2009):

Ճիշտ է՝իրենց հետաքրքրող մի շարք նախագծեր:

«Բարեփոխումների մեր սկսած շարքը նպատակ է հետապնդում, այո, համալրել պետական բյուջեն» (Հայ. աշխ., 20.9.2008): Ճիշտ է՝ Մեր սկսած բարեփոխումների շարքը նպատակ է հետապնդում,

Կամ՝ Բարեփոխումների՝ մեր սկսած շարքը նպատակ է հետապնդում,

«Նման օրինակներ այսօրվա կյանքից կարելի է բազմաթիվ բերել» (Հայկ. ժամ., 18.7.2008): Ճիշտ է՝ Այսօրվա կյանքից նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել:

«Ուզում են՝ նրան ինչ-որ կերպ օգնել փորձելու համար» (Հայկ. ժամ., 26.12.2007):

Ճիշտ է՝ Ուզում են՝ ինչ-որ կերպ օգնել նրան՝ փորձելու համար:

«Հիմա ես պատրաստ եմ ներկայացնել զեկույցի տպագիր տեքստը. չեմ ուզում օրենքը խախտած դուրս գալ» (Բր., 20.3.2007)

Ճիշտ է՝ չեմ ուզում օրենքը խախտել:

«Դա առայժմ նախագիծ է, որն իրականացնելու համար հսկայական աշխատանք է պետք սկսել» (ՀՀ, 30.1.2007):

Ճիշտ է՝ որն իրականացնելու համար հսկայական աշխատանք պետք է կատարել:

«Բսկ տաքսիների վարորդները ոչ թե հոգեխանգարված են եղել, ինչպես հավանաբար թվացել է ոստիկաններին, այլ բողոքել են նախօրեին՝ տրանսպորտի և կապի նախարարության սկսած դեղին համարանիշներ չունեցող տաքսիների նկատմամբ սկսած վերահսկողության կապակցությամբ» (168 ժ., 8.11.2008):

Քերականական միջոցներից շարադասության ոչ ճիշտ ձևերի ենք հանդիպում նաև պարզ նախադասություններում, ինչպես՝ «Բաքվի մոտ ամերիկյան կտեղակայվի՞ ավիառազմահանգրվան» (ՀՀ, 13.3. 2009): Ճիշտ է՝ Բաքվի մոտ ամերիկյան ավիառազմահանգրվան կտեղակայվի՞: «Մակայն այս թեմայով զրուցեց որոշ հայաստանյան մշակութային օջախների ղեկավարների հետ» (Առ., 28.5.2008): Ճիշտ է՝ զրուցեց Հայաստանի մշակույթի որոշ օջախների ղեկավարների հետ: Կամ՝ մշակույթի օջախների որոշ ղեկավարների հետ:

«Հայք» և «Էրեբունի» թիմերին առաջարկում էին հարցեր՝ վե-րաբերող Հայաստանի պատմությանն ու մշակույթին» (ՀՀ, 17.3. 2009):

Ճիշտ է՝ առաջարկում էին Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող հարցեր:

«Այս ինչ լավ մարդու իրավունքների պաշտպան ենք ունեցել» (Հայկ. ժամ., 26.4.2008):

Ճիշտ է՝ Մարդու իրավունքների այս ինչ լավ պաշտպան ենք ունեցել:

«Մանույանը պատասխանել է, դժվար թե, բայց ճիշտը այն է, որ պետք է նախագահի հետ մի հատ խոսվի» (Հայկ. ժամ., 24.4.2009):

Ճիշտ է՝ պետք է նախագահի հետ խոսել:

Եթե նման կիրառությունները խոսակցական լեզվում թույլատրելի են, ապա մամուլին անհարիր են:

Այսպիսով՝ արդի մամուլում նախադասությունների կապակցությունը, ինչպես նաև նրանց բաղադրիչ նախադասությունների կապակցությունը միշտ չէ, որ ճիշտ են՝ իրենց բառական, քերականական, հնչերանգային ներքին օրինաչափություններով:

Համաձայնություն: Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը: Եթե եզակի ենթակայի գործողությանը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովածի և հետ կապի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի թվով²: Օրինակ՝ «Ես նրա հետ ծառերը ջրեցի»: Թեև հետ-ով նշվում է գործողություն կատարող այլ առարկա (կամ առարկաներ), բայց դա չի ազդում ենթակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում ենթակայի պաշտոնով և չի ազդում ենթակայի թվային հատկանիշի վրա: Մինչդեռ արդի մամուլում ստորոգյալը նման դեպքերում երբեմն դրվում է հոգնակի թվով: Այսպես՝ «Արոնյանը Անանդի հետ 6-ական միավոր ունեին» (Ազգ, 10.3.2009): Պետք է լինի՝ ուներ: Կամ՝ «Մենք այս երկրի սյուներն ենք, - երեկ «Հայելի» ակումբում հայտարարեց «Գրանդ հոլդինգի» նախագահ Հրանտ Վարդանյանը, որը ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի հետ բանավիճելու էին եկել» (Առ., 12.4.2007): Կրթական համակարգը, առողջապահական համակարգի հետ, ըստ միջազգային զեկույցների ներկայացված են» (ԶԻ, 6.3.2007):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել հոգնակի ենթակայի փոխարեն եզակի ենթակայի և եզակի ստորոգյալի փոխարեն հոգնակի ստորոգյալի, ինչպես նաև հոգնակի ստորոգյալի փոխարեն եզակի ստորոգյալի

² Պալասանյան Ս., Քերականություն մայրենի լեզվի (Ա, Բ, Գ), Թիֆլիս, 1894, էջ 192:

գործածությունները: Այսպես՝ «Մենք նման դեպքերին շատ ցավագին ենք արձագանքում, դա ընդհանուր պատմամշակութային արժեքներ են» (Իր., 14.6.2005): «Բարեկամն էլ մտածում, մտածում է ու ասում. «Դե, էն որ նվագախմբի առաջ կանգնում, ձեռքերը թափ են տալիս» (Հայկ. ժամ., 2.8.2008): «Նա տարբեր միջոցառումների է մասնակցել և բոլորն էլ լուսաբանվել է» (ՉԻ, 15.5.2007: Իմաստով հոգնակի բոլոր-ն ենթական պահանջում է հոգնակի ստորոգյալ՝ լուսաբանվել են: Սրանք գրական լեզվի կանոնների խախտում են:

Հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, սակայն ունեն հոգնակիի իմաստ, օրինաչափորեն համաձայնվում են ձևային կոդմով, այսինքն՝ ունենում են եզակի թվով ստորոգյալ: «Միլվայի ամբողջ ընտանիքը, բացի հորից, զբաղվում են երաժշտությամբ» (Հայկ. ժամ., 12.12.2006): Պետք է լինի՝ ... զբաղվում է...

Եզակի ստորոգյալ են ունենում կամ շաղկապով կապված բազմակի ենթականները: Այսպես՝ «ԳԱԱ-ն միակ պետական մարմինն է, որի միջոցով գիտնականները կարող են ազդել հանրապետությունում ընթացող գիտական գործընթացների վրա, իսկ ԿԳ նախարարությունը կամ գործակալությունը կարող են կատարել միայն գործադիր գործառույթ» (Առ., 12.4.2007): Ճիշտը եզակի ձևն է՝ կարող է կատարել

Առդրություն: Սա բառերի ստորադասական կապակցության այնպիսի ձև է, որի ժամանակ լրացումը փոփոխություն չի կրում գերադաս անդամի իմաստային կամ քերականական հատկանիշների պահանջով³ (իմաստ. Իմ գեղեցիկ աղջիկները գրում են և Իմ աղջիկները գեղեցիկ գրում են): Առդրության բառերի շարադասությունից է կախված կապակցության ճիշտ կամ սխալ դրսևորումը (Սա տարածված սխալ է): Բերենք մամուլից քաղված մի քանի օրինակներ՝ «Հանձնաժողովը քննարկել և հաստատել է նաև գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող աջակցություն ՀՀ Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ.... (ՀՀ, 3.2.2007): «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն ՓԲԸ-ն կազմակերպում է մրցակցային բանակցություններ» (ՀՀ, 8.5.2007): Բազմակի հատկացուցիչների հետ տեղի պարագան սովորաբար դրվում է հատկացուցիչներից առաջ: Ճիշտ են՝ Երևանի Ա. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտ, Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն ՓԲԸ-ն....

Եթե առդրության լրացյալն ունի հատկացուցիչ և որոշիչ լրացումներ, ապա հատկացուցիչը պետք է նախորդի որոշյին: Օրինակ՝ «Նա ՕԵԿ-ի՝ երրորդ մշակույթի նախարարն է» (Հայկ. ժամ., 8.2.2006): Պետք է լինի՝ ՕԵԿ-ի՝ մշակույթի երրորդ նախարար կամ՝ ՕԵԿ-ից մշակույթի երրորդ նախարարն է: «Նախ անմիջապես առաջանում է ԼՂՀ նոր պաշտպանության նախարարի խնդիր (Իսկ.

³ Արախանյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 406:

իր., 3.3.2007): «Այսօր նախկին մշակույթի նախարար Թամար Պողոսյանը կպարգևատրվի այս գերատեսչության ոսկե մեդալով» (Առ., 17.7.2009):

Եթե առողջության լրացյալն ունի հարաբերական և որակական ածականներով որոշիչներ, ապա հարաբերական ածականը պետք է դրվի որակականից առաջ, քանի որ հարաբերականը առարկայական իմաստ ունի և զուրկ է համեմատելիության հատկանիշից. որակական ածականից հետո դրվելով, վերջինս կվերաբերի նաև նրան, ինչպես՝ «Մեծ քրդական համայնք ունեցող Ստամբուլում, սակայն, այդ բողոքի ակցիան շատ խաղաղ է անցել» (Առ., 15.12.2009): Ճիշտ է՝ քրդական մեծ համայնք...

Կամ՝ «Ծննդյան երեկոյին արդյոք կայի՞ն այլ հայ արվեստագետներ ևս» (Առ., 26.5.2007): «Դրանից հետո, իհարկե, տարբեր միջազգային կազմակերպություններում կրկին հանդիպել ենք» (Հայկ. ժամ., 3.2.2007): «Նա հանդես է գալիս Մոսկվայում մանրածախ առևտրի խոշոր հայկական կենտրոն ստեղծելու օգտին» (Իր., 23.3. 2008): Ճիշտ են՝ ...հայ այլ արվեստագետներ..., ...միջազգային տարբեր կազմակերպություններում..., ...հայկական խոշոր կենտրոն...

Մի թվականով (երբեմն էլ անորոշ դերանունով) արտահայտված որոշիչը՝ որպես կանոն, դրվում է ածական որոշիչից առաջ⁴: Մինչդեռ մամուլում կարդում ենք. «Այս բոլոր աշխատանքները, վերջին հաշվով, միտված են նրան, որ Աշտարակը դառնա գեղեցիկ մի վայր, որ զարգանա զբոսաշրջությունը, որ ժողովուրդը ունենա աշխատանք, բիզնես» (Իր., 10-13, 10.2008): Պետք է լինի՝ ...մի գեղեցիկ վայր...

Այնուամենայնիվ, նշենք, որ ենթակայի և ստորոգյալի համաձայնության օրինաչափությունները գնալով ավելի են կայունանում, չնայած արդի մամուլում երբեմն տեղ են գտնում սխալ դրսևորումներ: Արդի մամուլում առողջության կապակցությունների սխալ դրսևորումներն ավելի տարածված են:

Խնդրառություն: Կապակցման այս եղանակի դեպքում լրացումը ընդունում է լրացյալի պահանջած համապատասխան ձևը (հոլովը), որը պայմանավորված է լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով: Մամուլում տեղ գտած խնդրառական սխալ ձևերը հիմնականում պայմանավորված են բարբառի, խոսակցական լեզվի, ռուսերենի ազդեցությամբ: Այսպես՝ «Ես ո՞նց կարամ նրա առաջարկությանը միանգամից պատասխան տամ (ՉԻ, պատգամավորի խոսք, 22, 6.2007): «Երեկ օրվա կեսը վատնեցինք մի պարզ տեղեկատվություն ճշտելու վրա» (ճշտելու համար) (Առ., 23.2.2007): «Արևմուտքը, ըստ էության, սկսել է «մատերիալ» հավաքել ՀՀ իշխանությունների վրա (իշխանությունների մասին) (Իր., 8.11.2005):

Հայերենի համար օրինաչափ չեն և սովորաբար գործածական չեն ներգոյական հոլովաձևերը. շահում է այն բանում, խնդիրը նրանում է կապակցությունները: Սակայն դրանք ևս տարածված են մամուլում, ինչպես՝ Պետությունը շահում է այն

⁴ Նույն տեղում, էջ 349:

բանում, որ երիտասարդ ընտանիք է ձևավորում (Բր., 17.4.2007): Պետք է լինի՝ պետության շահն այն է, որ... «Մեր ժողովրդի ամենամեծ խնդիրը կայանում է նրանում, որ ջուրը շուրջօրյա չէ» (Փակ., 19.4.2007): Պետք է լինի՝ ... ամենամեծ խնդիրն այն է, որ...

Ռուսերենի ազդեցությամբ է պայմանավորված նաև պատահել բայի հետ կապի խնդիրը, օրինակ՝ «Նույն բանը պատահեց նոր խորհրդարանի հետ» (...պատահեց նոր խորհրդարանին) (ՀՀ, 13.4.2008):

Ոչ ճիշտ հոլովաձևեր՝ պայմանավորված բայերի խնդրառական առանձնահատկություններով: Նման դեպքերում լրացումը չի ընդունում լրացյալի պահանջած համապատասխան ձևը:

Ներկայացնել բայը պահանջում է ուղիղ խնդիր լրացում: Ներկայացնել մի բան (մեկին): Օրինակ՝ «Բսկ հանդիպման ընթացքում նրանց շատ հստակ ներկայացրեց իր ապագա ծրագրերին ու անելիքներին» (Բր., 13.4.2007): Պետք է լինի՝ ...ներկայացրեց իր ապագա ծրագրերն ու անելիքները:

Պատասխանել բայը հետևյալ օրինակում ուղիղ խնդիր չի պահանջում, (պատասխանել ինչի): Օրինակ՝ «Ես կարծում եմ, որ նա պետք է պատասխանի այդ մեղադրանքները» (Հայք, 8.11.2008): Պետք է լինի՝ պատասխանի այդ մեղադրանքներին:

Մեկ այլ օրինակ՝ «Նա ասաց, որ իր հետաքրքրող հարցերը ինքը կտա հանձնաժողովում ներկայացված դաշնակցական ներկայացուցիչներին և պարտավոր չէ մեզ ասել այդ մասին» (ՉԻ, 14.6.2008):

Պետք է իր սեռական հոլովի փոխարեն լինի իրեն տրական հոլովը, որովհետև հարցերը իրեն են հետաքրքրում:

Եղանակավոր բայերի կողքին անորոշ դերբայի փոխարեն ըդձական եղանակով դիմավոր բայի գործածությունը խոսակցական լեզվին է հատուկ: Գրական հայերենում անընդունելի է: Օրինակ՝ «Բոլորս էլ գիտենք, որ հայրենական արտադրողը, ըստ էության, չի կարա արտադրի ...ինչի չըլներք բիզնես կենտրոն, որ ՀՀ օրենսգրքում ուզում ես նայի, չկա: Էս չենք կարա ավելացնենք (Հայկ. Ժամ., պատգամավորի խոսք, 1.5.2008):

Ջերծ ածականը, իր բառիմաստով պայմանավորված, պահանջում է բացառական հոլովով դրված խնդիր: «Մինչդեռ Վենետիկի հանձնաժողովն էլ պնդում էր, որ հանձնաժողովը լինի պրոֆեսիոնալ՝ զերծ քաղաքականությունը» (...զերծ քաղաքականությունից) (ՀՀ, 2.4.2005):

Ինչպես հայտնի է, կապերը հարաբերակից են հոլովներին և դրրվելով այս կամ այն հոլովաձևերի վրա՝ ցույց են տալիս տարբեր հարաբերություններ, այսինքն՝ մի դեպքում առկա է հոլովներով, մյուս դեպքում՝ կապային կառույցներով արտահայտված խնդրառություն:

Մակայն մեր խոսքն այստեղ ևս ոչ ճիշտ կապային կառույցների մասին է: Մեր համար, քո համար, իմ հետ կապակցությունները հատուկ են խոսակցական լեզվին,

քանի որ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված կապի խնդիրը դրվում է տրական հոլովով, իսկ մյուս դերանուններով կապի խնդիրը՝ սեռական հոլովով: Օրինակ՝ «Որ մեր համար նորանոր բարդություններ է ստեղծում» (Ազգ, 8.10.2008): «Բզուր տեղը չեղած տեղից քո համար պրոբլեմներ մի ստեղծի» (Հայկ. ժամ., 15.3.2008): «Կարող եմ իմ հետ կատարված մի մասնավոր դեպք պատմել» (Ազգ, 18.6.2008):

Ճիշտ են՝ մեզ համար, քեզ համար, ինձ հետ:

Սեռական հոլով + հետ կապով ձևավորված միասնության հարաբերությանը անձի դեպքում բնորոշ է փոխադարձ գործողություն և ընդունում է միասնության պարագա (ծանոթանալ ճարտարապետի հետ), իսկ իրի դեպքում՝ հանգման խնդիր (ծանոթանալ հատակագծին): Մինչդեռ արդի մամուլում միշտ չէ, որ այդպես է, ինչպես՝ «Հասցրել ենք ծանոթանալ Երևանի նոր հատակագծի հետ» (Իր., 2.9.2005): Պետք է լինի՝ հատակագծին:

Նույնը կարող ենք ասել հանդիպել բայի մասին, որը, ըստ իմաստի, կարող է ընդունել միասնության պարագա (հանդիպել (հանդիպում ունենալ) ուսանողության հետ) կամ՝ հանգման խնդիր (հանդիպել ընկերուհուն): Օրինակ՝ ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը հանդիպեց Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանի հետ և այժմ էլ հանդիպելու է Ադրբեյջանի արտգործնախարար Է. Մամեդյարովին» (ՀՀ, 13.3.2007): «Բշխանության ներկայացուցիչներից Կրամերը, մասնավորապես հանդիպել է վարչապետ Տիգրան Մարգարյանին» (Հայկ. ժամ., 26.6.2008): Ճիշտ են՝ ...հանդիպելու է Է. Մամեդյարովի հետ, Տիգրան Մարգարյանի հետ:

Իբրև մի բանի պատճառ չի կարող գործածվել հետևանք կապը: Օրինակ՝ «Գլխավոր քարտուղար Վալդեկ Ռոդեն թողեց պաշտոնը հիվանդության հետևանքով»: Ճիշտ է՝ ...թողեց պաշտոնը հիվանդության պատճառով: «Բժշկական կազմակերպություններին տրվող պետպատվերի ծավալները 2008 թ. նկատմամբ չեն նվազեցվել. պահպանվել է նույն ծավալով և որակով աշխատանքների կազմակերպումը» (ԶԻ, 7.3. 2009): Պետք է լինի՝ ...2008 թ. համեմատ չեն նվազեցվել...

Այսպիսով՝ արդի մամուլի խնդրառական կապակցություններին ևս բնորոշ են ոչ ճիշտ դրսևորումներ՝ պայմանավորված եղանակավորողների, բայերի, անվանական, հոլովներով և կապային կառույցներով արտահայտված խնդրառական առանձնահատկություններով:

Մամուլը մեծ դեր ունի գրական լեզվի նորմերի հաստատման, դրանց ամրակայման, արտաքին բացասական ազդեցությունների վերացման, սեփական միջոցներով զարգացման, անադարտ պահպանության և բազմաթիվ այլ հարցերում: Մամուլի աշխատողները պարտավոր են ավելի զգոն լինել և նման կարգի սխալներ չտարածել: Ընդհակառակը, նրանք պիտի նպաստեն մեր ոսկեդինիկ մայրենիի նորմերի պահպանմանը, բնականոն զարգացմանը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխ. – Աշխատանք (թերթ)
Առ. – Առավոտ (թերթ)
Իր. – Իրավունք (թերթ)
Իսկ. իր. – Իսկական իրավունք (թերթ)
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն (թերթ)
Հայկ. ժամ. – Հայկական ժամանակ (թերթ)
Հայ. աշխ. – Հայոց աշխարհ (թերթ)
168 ժ. – 168 ժամ (թերթ)
ԶԻ – Չորրորդ իշխանություն (թերթ)
Փակ. – Փակագիծ (թերթ)
Ֆուտ. – Ֆուտբոլ (թերթ):

**НЕНОРМАТИВНОЕ УПОТРЕБЛЕНИЕ СИНТАКСИЧЕСКИХ
КОНСТРУКЦИЙ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПЕРИОДИКЕ**

БАРСЕГЯН А. Г.

Резюме

Современная армянская периодика изобилует примерами ошибочного употребления синтаксических конструкций, что, в частности, проявляется в нарушении определенной связи между синтаксической конструкцией и использованными в ней лексическими и грамматическими признаками слов, между внутренними закономерностями связи в предложении – лексической, грамматической, интонационными, а также в согласовании, примыкании, в порядке слов, особенностях связи в управлении – в употреблении модальных глаголов, глаголов в глагольном и именном управлении, в использовании падежей, предложных конструкций.

Указанные явления рассматриваются не только внутри предложений, но и на уровне текста.

Пресса играет огромную роль в утверждении норм литературного языка, их закреплении, нейтрализации внешних негативных воздействий, в сохранении чистоты языка и т. д. В силу сказанного средства массовой информации не должны тиражировать подобные ошибки, а наоборот, способствовать сохранению нормативной лексики родного языка, естественному развитию и чистоте речи.